



## Հ ա շ վ ե տ վ ու թ յ ու ն

### 2005 թվականին «Փոքր և Միջին Բիզնեսի Հիմնադրամի» կողմից իրականացրած գործունեության վերաբերյալ

«Փոքր և Միջին Բիզնեսի Հիմնադրամի» գործունեությունը 2005 թվականին ուղղված է եղել կանոնադրական նպատակների իրականացմանը՝ այն է համապատասխան ծրագրերի մշակմամբ և իրագործմամբ նպաստել Հայաստանում գործարար միջավայրի բարելավմանը, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման համար բարենպաստ օրենսդրական դաշտի և ներդրումային միջավայրի ձևավորմանը:

Գործունեության շրջանակներում ՓՄԲՀ-ն համագործակցել է ոլորտի զարգացմանն աջակցող տեղական և միջազգային կազմակերպությունների և հաստատությունների հետ:

Հաշվետու տարում կազմակերպության կողմից ծրագրեր են իրականացվել գործունեության հետևյալ հիմնական ուղղություններով.

- ՀՀ համայնքների գործարար ներուժի, գործարար միջավայրի, գործող ենթակառույցների աշխատանքի, գործարարության զարգացման ինստիտուցիոնալ խոչընդոտների փորձագիտական գնահատում:
- Փոքր և միջին ձեռնարկությունների կոռուպցիային դիմակայելու կարողությունների ուսումնասիրություն, գնահատում և զարգացում:
- Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտին առընչվող օրենսդրության բարեփոխումների խթանում և աջակցություն:
- ԱՀՌԾ ծրագրի իրականացման մոնիտորինգի շրջանակներում նախատեսված գործարար և ներդրումային միջավայրի զարգացմանն ուղղված հիմնական մոտեցումների գնահատում և կատարելագործում:
- Խոցելի սոցիալական խմբերի ինքնագրավածության համար պայմանների ապահովմանն ու աղքատության կրճատմանն ուղղված միջոցառումների և ծրագրերի մշակում և իրականացում:
- Համընդհանուր շահերի պաշտպանության և Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը, օրենսդրական բարեփոխումներին, ժողովրդավարական սկզբունքների արձատյավորմանը գործարար համայնքի ակտիվ ներգրավման նպատակով աջակից կազմակերպությունների դաշինքների ձևավորում:
- Փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների զարգացմանն ուղղված բարձրորակ մասնագիտական խորհրդատվության, տեխնիկական և տեղեկատվական օժանդակության մատուցում:

Հիմնադրամը օժանդակել է նաև փոքր և միջին բազմաթիվ ձեռնարկատերերի՝ նրանց ցուցաբերելով անհրաժեշտ խորհրդատվական, տեղեկատվական եվ ուսուցողական բնույթի աջակցություն: Տարբեր կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր բազմիցս դիմել են ՓՄԲՀ-ին հարկային և մաքսային օրենքների վերաբերյալ խորհրդատվության, ձեռնարկության գրանցման մեխանիզմների և բիզնես պլանների մշակման, վարկավորման աղբյուրների, սխեմաների և վարկավորող կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվության, տեխնիկական օժանդակության/փաստաթղթերի պատրաստման, թարգմանությունների և պատճենահանման ծառայությունների/ խնդիրներով, որոնց մատուցվել է պատշաճ մակարդակի համապատասխան ծառայություններ:

Հաշվետու տարում ՓՄԲՀ-ի գործունեության ֆինանսավորման աղբյուր են հանդիսացել հիմնադրամի կողմից մատուցված ծառայություններից ստացված եկամուտները, հիմնադիրների կողմից կատարված ներդրումներն ու նվիրատվությունները, ինչպես նաև միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից տրամադրված դրամաշնորհները:

«Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամ»

Ա Մ Փ Ո Փ Հ Ա Շ Վ Ե Կ Շ Ի Ռ

ք. Երևան, Տիգրան Մեծի 4

31 դեկտեմբերի 2005թ.

/հազար դրամ/

ՀՈԳՎԱԾՆԵՐ		Նախորդ տարի	Հաշվետու տարի
<b>1. ԱԿՏԻՎՆԵՐ</b>			
1.1 Ոչ ընթացիկ ակտիվներ			
1.1	Հիմնական միջոցներ	629	1,619
1.2 Գրամական միջոցներ			
1.2.1	Գրամարկո	1	205
1.2.2	Հաշվարկային հաշիվ	27	326
1.3	Այլ ակտիվներ	79	1
<b>ՀԱՇՎԵԿՇԻՌ</b>		<b>736</b>	<b>2,151</b>
<b>2. Պարտավորություններ</b>			
2.1 Ոչ ընթացիկ պարտավորություններ			
2.1.1	Ակտիվներին վերաբերվող դրամաշնորհ	522	1,479
2.2 Ընթացիկ պարտավորություններ			
2.2.1	Եկամուտներին վերաբերվող դրամաշնորհ	-	486
2.2.2	Այլ պարտավորություններ	36	39
<b>ԸՆԴԱՄՆՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>		<b>558</b>	<b>2,004</b>
<b>3. Կապիտալ</b>			
3.1	Չբաշխված շահույթ	132	92
3.2	Սեփական կապիտալի այլ տարրեր	46	55
<b>ԸՆԴԱՄՆՆԸ ԿԱՊԻՏԱԼ</b>		<b>178</b>	<b>147</b>
<b>ՀԱՇՎԵԿՇԻՌ</b>		<b>736</b>	<b>2,151</b>

*Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն  
(ձև թիվ 2)  
2005 թիվ*

/հազար դրամ/

ՀՈԳՎԱԾՆԵՐ		Նախորդ տարի	Հաշվետու տարի
<b>1. ԵԿԱՄՈՒՏՆԵՐ</b>			
1.1	Ճառայությունների մատուցումից եկամուտներ	1,151	650
1.2	Ստացված դրամաշնորհ		14,592
1.2	Այլ եկամուտներ	275	50
<b>Ընդամենը եկամուտներ</b>		<b>1,426</b>	<b>15,292</b>
<b>2. ԾԱԽՍԵՐ</b>			
2.1	Վճարված աշխատավարձ		7,131
2.2	Սոցալ հատկացում		1,114
2.3	Ամորտիզացիոն հատկացումներ	158	987
2.4	Այլ ծախսեր	1,187	6,098
<b>Ընդամենը ծախսեր</b>		<b>1,345</b>	<b>15,330</b>
3	<i>Շահույթ /վնաս/ մինչև հարկումը</i>	<i>81</i>	<i>(38)</i>
4	<i>Շահուրահարկ</i>	<i>(27)</i>	<i>(2)</i>
5	<i>Զուտ շահույթ /վնաս/</i>	<i>54</i>	<i>(40)</i>

**Մեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն**  
(ձև թիվ 3)  
2005թ.

#	ՀՈԳՎԱՃՆԵՐ	/հազար դրամ/	
		Նախորդ տարի	Հաշվետու տարի
<b>1. Մեփական կապիտալի տարրերի ավելացում</b>			
1.1	Զբաղված շահույթի ավելացում	54	(40)
1.2	Մեփական կապիտալի այլ տարրերի ավելացում	5	9
2	Մնացորդը տարեկզբին	119	178
3	Մնացորդը տարեվերջին	178	147

**Գրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն**  
(ձև թիվ 4)  
2005թ.

#	ՀՈԳՎԱՃՆԵՐ	/հազար դրամ/	
		Նախորդ տարի	Հաշվետու տարի
1	<b>Գործառնական գործունեությունից մուտքեր</b>		
1.1	Ստացված դրամաշնորհ		16,036
1.2	Գործառնական այլ գործունեությունից մուտքեր	1,402	830
2	<b>Գործառնական գործունեությունից ելքեր</b>		
2.1	Վճարումներ աշխատակիցներին		(7,174)
2.2	Վճարումներ սոց. ապահովագրության հիմնադրամին		(1,116)
2.3	Վճարումներ բյուջե	(120)	(21)
2.4	Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման դիմաց վճար	(1,344)	(5,224)
2.5	Գործառնական գործունեությունից այլ ելքեր		(872)
	<b>Ընդամենը գործառն. գործունեությունից ելքեր</b>	<b>(1,464)</b>	<b>(14,407)</b>
	<b>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների գուտ հոսքեր</b>	<b>(62)</b>	<b>2,459</b>
3	<b>Ներդրումային գործունեությունից ելքեր</b>		
3.1	Հիմնական միջոցների ձեռք բերում	(124)	(1,977)
	<b>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների գուտ հոսքեր</b>	<b>(124)</b>	<b>(1,977)</b>
4	<b>Ֆինանսական գործունեությունից մուտքեր</b>		
4.1	Ֆինանսական օգնության ստացում	130	
4.2	Վարկերից և այլ փոխառություններից մուտքեր	5	30
5	<b>Ֆինանսական գործունեությունից մուտքեր</b>		
5.1	Վարկերից և այլ փոխառություններից ելքեր		(65)
	<b>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների գուտ հոսքեր</b>	<b>135</b>	<b>(35)</b>
6	Ընդամենը դրամական միջոցների գուտ հոսքեր	(51)	447
7	Կուրսային տարբերություն		56
8	Գրամական միջոցների մնացորդը տարեկզբին	79	28
9	Գրամական միջոցների մնացորդը տարեվերջին	28	531

Տնօրեն՝

Գլխավոր հաշվապահ՝

*Մազազ*

*ԲԿ*

Ն. Մախյան

Հ. Թամիրյան

